


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԻՆ

Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պետք է ուղղել առ
Տեղիւն ԱՐՇԱՆՈՅՍ յրազրի
ԳԱՂԱՔԱՆ (Նամակաստի)
Թիւ.

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՎ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Յրակի	20
Վեցամսեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է:

Խոնարարութեան ուղղուած
գրութիւնք ԵՍ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

ՆՈՐ ԳԻՍԱԿԸ

« ՆՈՐ-ՕՐ » ԻՆ (1)

Կէս մեթր վերաառութեամբ « Նոր-
Օր » ը ճակտին փակցուցած, Հայրապետ-
տական փառապանծ կոնդակը — երեւ թէ
սիրտը չ'աղտոտելու գիտումով, կամ սրտի
աղտոտութիւնը գոցելու համար այդպէս
ըրած — իբր կրծկալ կամ զենջակ իր
առջեւ կապած, ահա « Նոր Օր » ն ալ հրա-
պարակ նետուեցաւ: Իսկ մենք վայրկեան
մը կոյր Խորայէլը դարձած. սա հար-
ցումը կ'աղղենք անոր. « Զայնդ Յակո-
բինն է, իսկ ձեռքերդ Եսաիինը չ'են... »

Մենք շատ մտէն գիտենք թէ « Նոր-
Օր » կը նշանակէ անմահն « Փիլիսի » մահ-
կանացու եզրը. հակառակ իր երկրորդ
թուի մէջ երեւցող շառլարանի մը « Ապ-
րիլ մէկ » ի առթիւ զաւելած մէկ յոգ-
ուածին, որով պիտի լինէր « Փիլիսի » ն
անմահ. երեւ թէ փոսթը « Նոր Օր » ի փո-
խած աստուածներու անմահութեան խոր-
հրդանշան այդ թուշուր, ոչխարին դմակը
այժին ետե կախելով դիմակաւորելէ վերջ,
իր հին օրերու աննախանձելի « Փիլիսի » ին
մահկանացու շարունակութիւնը կ'աղղէ
զառնալ: « Ազաւորն սիրամարգ դառնա-
լու տենջը, կամ պանրին հօտէն զմայլած
աղոտիտակին երգը ». երբ անմահն Փէնէ-
լոն կը գրեր, հոն յետագայ տողերը, հե-
ղինակը կարծեմ թէ գրած պիտի ըլլայ
զանոնք ուղղելով հին « Փիլիսի » ի և այս-
օրուայ « Նոր-Օր » ի Խմբագրին:

«Si Votre ramages,
«Se rapportent à votre plumages,
«Vous etes le phe nix les hotes de ces bois.»

Մենք ընաւ նպատակ չ'ունինք նոր
թերթի մը գոյութիւն առնելը ձաղկիչ
քննադատութեամբ աւերելու. բնդհակա-
ռակը թերթերու և հրատարակութեանց
ընդ միշտ մօտիկ զգացած ենք մեր սիրտը:

(1) Անկողմնակալութիւնը պարագ կը
գնէ մեր վրայ նոյնութեամբ հրատարակել
սոյն յօդուածն, որ Լսարան-Ընթերցարանի
Հիմնադիր և իրազեկ անդամներէն միոյն
կողմէ զրկուած է մեզ ի հրատարակութիւն:

Առաջիկայիս եթէ յարմար առիթը ներ-
կայանայ, իբր անգամ մը նոյն ընկերութեան,
մեր անձնական կարծիքն ալ պիտի յայտնենք
այս մասին:

բայց երբ յանուն ժողովրդեան իրաւանց
սրբութեան դիմակի տակ կը մտնեն բարե-
կենդանական քաջաջօ ի յատուկ անձնաւո-
րութիւններ, բարութեան շաղախը աչքեր-
նուն քած. Խորենացու ողբերը բերանին
ու ձեռքերին անյատակ բաց քտակ մը՝ որ
ժողովուրդը հոն լեցնէ իր արիւն քրտին-
քով շահած լուծան, մեր սիրտը չի հան-
գուրթեր լուելու ու վար կ'առնենք դի-
մակը:

Թերեւս ամեն ոք կը յիշէ ողբին ա-
ռակը. « Անձրեւոտ օր մը ողբին անակը կը
կաթկէթեր. ինչ խորհի նէ լաւ. ինչպէս
կ'ըլլայ եթէ երթամ մեր գրոցի սա օձէն
խնդրեմ որ զիս ներս առնէ իր անակը. ու
չ'ուշանար. « թը.թ. . . թը.թ. . . թը.թ. . .
դռնակդ բաց . . . » — ո՞վ է ան: — Ողբին
քու գրացիդ ու բարեկամդ. զիս ներս առ-
բանի մը փոյրկեան, զաւելներուդ հարցն
ըլլայ այն մինչև սա անձրեւոտ անցնին . . .
դռնակը կը բացուի ու ողբին կերթայ
անկիւն մը կը կծկտի . . . քիչ մը վերջը
կծկտած ողբին նայիս ինքզինքը անհան-
գիստ զգալով կուռի, կը լարուի ու կ'սկսի
իր խայթոցներով կծել օձը: — Բարեկամ,
կ'ըսէ անոր օձը, յիբառի թէե ես մարգ-
կութեան նախամայրը խարեցի, բայց դուն
ինձմէ աւելի խորամանկ ես եղեր: » Աւ բոյ-
նը ողբին ձգած կը հեռանայ:

Պարոն Խմբագիր « Նոր-Օր » ի, « Փիլ-
իսի » ի անյաշող զիջակներէն վերջ մարգ-
կային ո՞ր խղճմտանքով ձեր ձեռքերը
կ'եկնցնէք դեռ իր դռները չբացած Լսա-
րան-Ընթերցարանն մը վերածելու « Նոր-
Օր » թերթի մը: Միթէ Լսարան-Ընթեր-
ցարանն և լրագիր նոյն բաներն են. միթէ
Հայրապետական փառապանծ կոնդակ մը
ձեր թերթի հիմնարկութեան համար զրկը-
ուած էր, որ դուք զայն ձեր առաջին թուի
ճակատը իբր զրահ անցուցած ասպարէզ կը
նետէք ձեր թերթը. միթէ անփոփոխելի
նպատակով ծրագրուած Լսարան-Ընթերցա-
րան հիմնական ծրագիրը ձեզ կը թոյլատրէ՞
ձեր անիրաւ ձեռնարկը իրագործելու համար
ինկատի չ'ունենալ ժողովրդի և հիմնադիր-
ներու փափաքը և գծած շաւիղէն չեղիլ
և զայն առաջնորդել ուղեւ զարտուղի շա-
ւիղներով, որոնք Լսարան-Ընթերցարան
հիմնադիրներու գծած ծրագրէն շատ հեռի
են: Այլ է թերթ, այլ է Լսարան-Ըն-
թերցարան: Իսկ եթէ դուք կը յամառիք
թէ նոյնն են մէկի գործնական օգուտները
միւսի ենթադրական օգուտներուն հետ,
չառ կը սխալիք և գործադրած կ'ըլլաք

առակի « Ողբին » գերը որ պատուաբեր
դերակատարութիւն մը չէ:

Դո՛ւք, Պարոն Խմբագիր « Նոր-Օր » ի,
դուք որ գործադիր ժողովոյ ապօրէն ընա-
րութեան մը միջոցաւ, զայն մատի փաթ-
տոց ընելով, յաջողեցաք Ատենապետաւ
նալ, կրնաք Լսարան-Ընթերցարան հիմ-
նադիր անդամներու և բոլոր անդամներու
ստորագիր վաւերացմամբ ձեր « Նոր-Օր »
թերթին մէջ իսկ հրապարակաւ պատաս-
խանել սա քանի մը հարցումներուն:

1. Հիմնարկութեան միթէ ձեզ իրա-
ւունք առին Լսարան-Ընթերցարան ան-
փոփոխելի նպատակը թերթի մը հրատա-
րակութեան յատկացնելու:

2. Առաջին Ընդհ. ժողովի մը պաշտօ-
նապէս քուէարկած Ատենապետին՝ Տօթթ.
Ժօթթ Եվլիանի գէմ ձեր յարուցած գաղտ-
նածածուկ քրթմնջիւններն թէ անկարող է
Ատենապետութեան կուսման, իսկ ձեզ հա-
մար թէ՛ « դուք ալ ձեր բազմադարձու-
թեան պատճառով չ'պիտի կարողանաք ձեզ
քուէարկուած Ատենապետութեան պաշտօնը
կատարել, արդեօք հեռատեսի գաւերով
սարքուած խաղ մը չ'է՞ր ձեր կողմանէ, ո-
րուն անհոգ կերպով չ'կարողացան թափան-
ցել Գործադիր ժողովոյ անգամ ձեր միւս
ընկերներէն մի քանի միամիտները և ձեր
խաղին թափանցող ընկերներն ալ իբր ձեր
հեռատեսի գաւերուն գաւակցող ընկերներ,
ուղեցին որ ձեր փափաքը կատարուի և
լուեցին. ու դուք ձանձրացուցած հին Ա.
տենապետը՝ ստիպեցիք իրեն որ տայ իր
հրատարականը և դուք ներքին քմիծաղով
մը ելաք բազմելու ձեր երազած Ատենա-
պետութեան աթոռը, սրպէսզի Լսարան-Ըն-
թերցարանն ընկերութիւնը ձեր ավին մէջ
առած խմոր մը չ'ինէք, ու երբ չ'ինեցիք, ըսէք
խնդրեմ, արդեօք կանխամտածման մը
արդիւնքը չ'է՞ր ձեր այսօրուայ « Նոր-Օր » ի
ծրագիրը:

3. Երբ իւրեց սեփական գործերու
պատճառով մէկիկ մէկիկ հեռացան Լսա-
րան-Ընկերութեան առաջին նստին մէջ
օրինաւորապէս ընտրուած Տօթթ. Յակոբ-
եան իբր Մայր Դիւանի Ատենապետ և Պր.
Ավօ՝ իբր Ատենապետ որոնք միաժամա-
նակ հիմնադիր անդամներ էին, ու դուք
անոնց տեղը հապճեպով և համարեա առանց
օրինաւորութեան ձեր հշու արբանեակները
զետեղեցիք, միթէ՛ անգամ մը փորձեցիք
անոնց ալ հարցնելու, որոնք իրաւունքը
ունէին իբրև ձեր ընկերները և իբրև հիմ-
նադիր, ձեր թերթի հիմնարկութեան համար

խորհուրդ տալու կամ անոր հակառակելու գործին. արգելօք անոնց հեռացման կ'սպասէիք:

4. Առի՞ք գոնէ, եթէ ոչ հիմնարկուներուն, դէ՛ թ Ընդհ. ժողովոյ բոլոր անդամներուն կարծիքը, ու եթէ չ'աւելիք:

5. Գործադիր ժողով մը կարո՞ղ է փոխել գծուած անկողնիսին յայտատակ մը:

Իսկ եթէ, Տէր խմբագիր, կամ խմբագրութիւն, թերթ մը հանելու, կամ անյաջողութեան մատուած թերթ մը ուրիշ հրատարակութեամբ մը փոխարինելու մարմնացը եթէ ձեզ այդչափ կը բոցալուռէք, դուք կրնայիք, անհատապէս, կամ հաւաքաբար կարելի ձեր շուրջը մի նոր ընկերութիւն և ձեռնարկել ձեր անհատական գործին, որուն համար բան մը չէ կարելի աւարկել. քանի որ այն « հացի խնդիր » է, իսկ ընդհանուրի նպատակաւոր գրամը անդոյն ձեռնարկութիւններու և մասնաւոր նպատակներու յատկացնել բացարձակ անխղճութիւն է:

Ի՞նչ հիմնադիր Ոսկան - Նապարհբու ածինացած սովորները բազումն ձեր արարքին դէմ, եթէ կը լսեն Արժօնքը, Տօքթ. Ֆակոբեանները, Տօքթ. Ժօրթ Էվլեանները, Չալաբեանները, Ալաթեանները, Շաւարշեանները, Երզնկացեանները և ինչ և ինչ... և բոլոր ուղղամիտ անդամները:

Այլ կարծեմ ժամանակն է որ անխնայ ըլլանք նոյն իսկ մեր հայր ու մայրերուն թերութիւնները ձաղկելու:

Աղեքսանդրիա ՊՈՒԹՈՒՆ

ԶՕՐԱՎԱՐ ՏԸ ՎԻՂԸՊՈՒԱ ՄԱՐԷՕՅԼԻ ՄԱՂԸ (Ականատեար մը պատմածները)

Վիլլըպուա Մարէօյլ գնդապետին մաշը նկարագրող նախալը գնելէ առաջ քան սենք թէ՛ ո՞վ էր այս ֆրանսացի գնդապետը եւ ի՞նչ գործ ունէր Պօէր բանակին մէջ:

Տը Վիլլըպուա Մարէօյլ ֆրանսական բանակին տնտեսի երիտասարդ եւ տնտեսի գիտուն զօրավարն էր. ազդեակիտութիւնը եւ զինուորական արհեստը կը ըլլած ընկողնացած էր. զինքը « երիտասարդ գնդապետ » կը կոչէին արդէն եւ իր զօրավար չ'ըլլալը շատ մը ձեր զօրավարներուն նախանձին արդիւնքն էր, որք չէին կրնար հանդուրժել որ քառասունեայ սպայ մը զօրավարութեան ատօնեանին բարձրանար:

Շատ մը բանակաբններու հետեւանքով իր հրաժարականը տուած էր եւ քաջուած կապրէր, յուսալով որ ֆրանսան իր գծարդ գայրկեանին իրեն օգնութեանը պիտի դիմէր:

Անկօ - Պօէր պատերազմին սկիզբները Պօէր կառավարութիւնը ազդեակ սպայակոյտի պիտի մը պէտքը զգտնով, Զօրավարի ատօնեանով հրաւիրեց Վիլլըպուան Պօէր բանակի սպայակոյտին վարչութիւնը ստանձնելու:

Տը Վիլլըպուա անձայն անշուղի մեկնեցաւ եւ բոլոր Պօէր բանակին հետեւելու յատակազիծերը պատրաստեց եւ պատճառ եղաւ բաւական ժամանակ Անգլիական բանակներուն ջախջախանքը:

Վերջերս Պօէր զօրավարները հետեւել չ'ուզեցին անոր խորհուրդներուն:

Մըք Մակերաֆօնիսի ամուր գիրքերուն մէջ կը գտնուէր Քրօնթի հետ, շուտով հասկցաւ Քրօնթի և Ռոպըրթի կարգադրած բացառիկ շարժումը եւ Անգլիա-

ցիներուն, իրենց գէպի Պլէտիֆօնիսի նախանշելու գիծը կարելու և զիրենք ֆուտուրանտի թակարդին մէջը ձգելու գիտուածութիւնը, անխնայապէս իրենց առաւ Քրօնթի որ եթէ շուտով չ'անանջէին, բոլոր բանակով գերի պիտի իյնային: Քրօնթ ականջ չը կարեց. գնդապետը ջանաց իր բոլոր զինուորական գիտութեանը բացատրել ձեր զօրավարին Անգլիացիներուն բացայայտ դիտարկութիւնը:

Իրեն ձայնակցեցաւ նաեւ կոմս Շթէնպէրի Աւստրիացի սպան, բայց Քրօնթ լըբրիտանացի պատասխանեց Տը Վիլլըպուան. « Պարո՛ն, ես ձեր ծննդէն առաջ կը հրանայի »:

Քուսուսարանտի պարտութիւնը ծանօթ է. Քրօնթ կը չորս հազար քաջերով գերի ինկաւ, բայց իր բանակին մեծագոյն մասը ընդ հրամանատարութեանը Տըլարէյի և Վիլլըպուան կըցաւ. գէպի հիւսիս նախանշելու այս միջոցին զիր ընտելեցաւ նաեւ Շթէնպէրի կոմսը որ յետոյ ազատ արձակեցաւ եւ բոլոր աշխարհի ստորաձայնեց Յըրանացի գնդապետին ազդեակիտական հանձարը:

Այդ պարտութեան վերջ խիստ մեծ կարեւորութիւն արուեցաւ Տը Վիլլըպուան. Վերջերս ինչպէս գրեցին, լուր ստինք որ 40 հազար Պօզօֆի շրջակայքը պաշարուէր է 5,000 Անգլիացիներէ Մէթուրնի հրամանատարութեանը և սպանուէր է:

Հետեւեալ հետաքրքրաշարժ նախալը մեղ կրկնցնէ թէ՛ ինչպէս մեռաւ Տը Վիլլըպուան. նախալը գրած է Ֆրանսացի մը որ Պօզօֆի պատերազմին մասնակցած է և գերի բռնուած ու հիւսիս Ս. Հեղինէ կը գտնուի:

Քար 14 Ապրիլ

« Ութ օրէ ի վեր մեկնած էինք Քրօնթիստան, հասանք Պօզօֆէն 20 քիլօմէթր հեռու գտնուող Լակար (Պօէր բանակատեղ մը) Զօրավարը իրենցաւ թէ քաղաքը Անգլիացիներէն գրաւուած է, մեզի հրաման տուաւ հանգստանալ երեք օր, ամեն իրիկուն կը հաւաքէր եւ կը բացատրէր մեր վարուելիք կերպը եւ քաղաքը գրաւելու միջոցները, մեզի միշտ պազարիտութիւն և քաջութիւն յանձարակցով, որովհետեւ խիստ ծանրակշիռ պարագաներու պիտի հանդիպէինք:

Ժամը 4-5ին ձառնայ ելանք առաջնորդներէ առաջնորդուած, քաղաքին մինչև առաւօտեան ժամը 2ը, առաջնորդը երկու անգամ մոլորեցաւ եւ Զօրավարը մեզի կանգ առնել տուաւ ձառնայ ձգելու համար:

Ժամը 4ին դարձեալ ձի կը հեծնենք եւ ժամը 11ին պզտիկ անտառի մը մէջ կը բանակինք, ցերեկին Զօրավարը հասկնալով որ սեղը գէշ ընտրուած էր, մեզի փոքրիկ Գօրէի մը ստորտը գերք մը գրաւել տուաւ: Պօզօֆէն 10 քիլօմէթր հեռու էինք Անգլիական գիծերու առջև:

Հազիւ թէ գիրքը գրուած էինք, ձիերնս ոտնակապած ձգեցինք ձարակիլ գաշտին մէջ, և մենք ալ պարսպայէն օգուաւ քաղկով սկսանք մեր անօթի սատուքներուն նայիլ:

Յանկարծ (ժամը մէկն է) դէտը քանի մը հեծեալներ կը նշուարէ Պօզօֆէն կողմ, անխնայապէս հրաման ընդունեցանք գէնքերնս առնելու եւ Քրօնթի գրաւելու: Զիւրքները կը հասնին եւ ժամը 11)2ին իրենց մէկ մասը քօրէի մը կը գրաւէ եւ մեզի գէմ կրակ կը բռնայ, մինչդեռ միւսները կը շարունակեն իրենց շրջափակ շարժումը: (Հոս նախալը ազդեակիտական մանրամասնութիւններ կուտայ պատերազմին վրայ):

Սոսկալի հրացանաձուլութիւնէ մը հոտը Զօրավարը կը սեսնէ որ ամենայն հարիւրապետ մը իրեն կը մտնուայ, սէլօվիւրի հարուածով գաշն իր օտքերուն սակ կը սարածէ, կացութիւնը խիստ վտանգաւոր է թշնամին մենէ երկու քայլ հեռու է, սուրհանգը հրացաններուն ծայրը, մինչդեռ մենք

սուին չուինք, մեր հրացանները կրակ դարձած են: Չորս կողմէն հեծեալներ կը լուռն և ժայռերու կտորներ գնդակներու հետ մեկտեղ կը տեղան մեր վրայ:

Ֆրանսացի մը Պ. Յ. Ֆրանք գլխէն գնդակ մը կ'ընդունի և գետինը գլորելով կը գոչէ « գործս ընկաւ զօրավարը ին կեցցէ՛ ֆրանսա »: Վերքը մահացու չէ, գնդակը աչքին մտնէ մտած և ականջին քովէն դուրս ելած է, ոտքի կելլէ. բայց երկրորդ գնդակ մը ուտէն կը մտնէ և կ'անակէն դուրս կելլէ: Բարեկամն Տը Պարտէն աջ թեւէն, վերաւորեալ կ'ըսէ զօրավարին որ մեր քովը անխնայ կեցցու է. « Զօրավարը ին, մեր նպատակին չ'հասանք, չորս կողմէն շըրջապատուած ենք, անօգուտ է գոնիլ այսչափ կեանքեր այսչափ անհաւատար կախ մը շարունակելով. անձնատուր ըլլանք »:

« Իրա՛ւ, եթէ այդպէս է յանձնուինք » կըսէ Զօրավարը, որ միշտ ոտքի վրայ կեցած էր ու գրգռուէն թաշկինակ մը հաննալով կ'սկսի երեքնել: Յանկարծ գետինը կ'իյնայ մտնէն ուղղուած գնդակէ մը զարնուած, իրեն կը մտնենք և և բարեկամն Տը Պարտէն մինչդեռ միւսները իրենց թաշկինակները կ'երեքնեն:

Զօրավարը կ'անակի վրայ տարածուած է բազուկները մարմնոյն քով, աչքերը բաց, շրթունքները գողգողին: Իր աջ կրունկին վրայ խոշոր վէրք մը կ'երեւայ ուրիշ արիւնքներ վիժելով դուրս կ'ելլայ ու կը բարձրանայ, կը ծոխ ու արտասուելով կը հաւբուրեմ գինքը:

Կրնայ ըսուիլ որ Աստուած խնայել ուզած է այս քաջերու քաջին այն հոգեկան չարչարանքը, զոր կը կրէ ամեն սրտի տէր մարդ անձնատուր ըլլալու պահուն:

Զօրավարը հիսնայ կը հանդիպի թրանսալալի հողին վրայ իր սիրած ու պաշտած ֆրանսական գրոշակին մէջ ստիպուած և Լորա Մէթուրն որսորդ ըլլալով, որս մը ընած ըլլալուն համար իր պաշտօնին վրայ թողուեցաւ:

քարգլ. Լ.

ԳՐԱԽՏԻ ՀՆԱՐՄԵՆ ՈՒ ՓԵՍԱՆ

Գանալիժող ջրվէժի մը մօտ նստած, Ուշի ուշով կը դիտէի ջուրն հասած, Որ հեռուէն վազէր գէպի քարածայռ Հոն փշուէր գլորելով զառ ի վայր:

Սոյն անուիլի եւ հեռոյն իրեւոյթի. Ինքից և զիս ինչպէս լերինք և բլուրք, իրաւունեցաւ սրտիս յուզուեալն այդ ձայնին, Գնացայ հոն կրթնելով մեծ ժայռին:

Յայնժամ անտառ մը բացուեցաւ ին առջև. Գլխուս վերեւ տեսայ աժգոյն մէկ տերեւ, Վերցուցի դայն և գիտեցի ակնկոր իտրազիբը այս կալուածի անտուր:

« Դեռ կ'սպասե՛ս այդ կայնոյն սակ սիրական, » « Ձե՛ս գիտեք թէ ինչ կ'սպասէ քո վրան, » « Յատկէ շուտով եւ հեռացիլ այդ վայրէն » « Մա՛հ կ'սպասե՛նայ քեզի, յաջողողը բոպէն »:

Իսկոյն մէկ կողմ նետուեցայ ես սարսափած, Վեր նայեցայ, երկսայրի մը կար կախուած, Ահ ու գողով ընկրկեցայ գէպի յետ, Ունենալով չոր տերեւն ալ ինձի հետ:

Ո՛հ, ի՞նչ սարսափ, ո՛ր փախչիլ ևս ո՞վ Աստուած, Անտառին մէջ արդեօք մէ՞կը կայ պահուած, Գաչելով ևս յառաջացայ անդադար. Արձազանքէր ձայնս անտառ, յետ և սար:

Նոյն միջոցին Գրախոս մը կարծես սիրաբոյր Ողջունեց զիս սայսով ինձի ծաղկանց բոյր. Արտոյան սկսաւ պատուիլ օդն իւր ձայնով, Սոխակն վազեց գիւրաւորել մեզը երգով:

Չորս դին ձայներ կը լսուին մեծ խրճուղիներն, Ապշած գիտեմ գեղեցիկութեան բնութեան.

Յանկարծ ձայն մը Գրախոսի խորին թրթռաց Վրդովեց ո՛հ, խաղաղութիւնն իմ մտաց.

« Եկու՛ր ինձի իմ հոգեգրանջ սիրտիս »
« Ուխտե՛ք լինիլ Գրախոսին Հարսն ու վեհասն »
« Չորսած անբունն այն զոր գտար քո վրան »
« Ես զրի հոն, այն է սիրոյս մեծ վկան : »

« Հայրածուելով մինչ վազէի այդ անասուն »
« Տեսայ զրեզ որ պտակէիր շնչատպաւ »
« Եկայ փարիլ պարանոցիդ վշտածար »
« Բայց ես մեզ զիս արիւնտս սուր ձ'իտպաւ : »

« Կորեկցայ թէ կրկին սիրոյ թշնամին »
« Գարանակալ կենայ խորին անտառին »
« Սարսափահար խկոյն տերեւ մը տալի »
« Որուն վրայ տեսածիս պէս գրեցի : »

Բուն խանդով յայտնով թոյց սիրուհոյս Բանկեցաւ այն նուազած սրտիս յոյս.
Յաղթանակի երգն սկսանք երգել մենք,
Հոն բուժուեցաւ մեր կրծին տակ փակած վէրք:

Այդ խնդուքն մէջ ես յանկարծ արթնացայ նոյն ջրվէժին նոյն ժայռին տակ զիս գտայ Ոտքի ելայ, փնտոցի նոյն գրախոս, Բայց անոր սեղ զրկեցի իմ դժխեղ բաղդ: Ս. Ե.

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ազգին վաղեմի բանաստեղծներէն և իր բազմաթիւ հեղինակութիւններով և վառվռուն ազգային երգերովը հանրածանօթ, աւերեալն ՍԻՄՕՆ ՖԷԼԷԿՍԱՆ, գեռ իր մէջ զգացած է երիտասարդական խանդը և Սամոյ ու Ձէյթունի վերջին դէպքերուն առթիւ, տաղաչափեալ երկասիրած է ՍԱՍՈՒՆ և ՁԷՅԹՈՒՆ ողբերգութիւն մը:

Մեղի համար ներելի չ'պիտի ըլլայ գովեստներ գրել հին բանաստեղծին սահուն և իմաստալից գրուածներուն համար.

« Երիտասարդ ըլլալ և երգել, ծեր ըլլալ և աղօթել » բուռն է. ծերունին Սիմօն Ֆելէկսան իր ներկայ նոր հրատարակելի տաղաչափութեանց մէջ գրած է երիտասարդին երգելու աւելնը և ծերին աղօթելու և ողբալու զգացումները միանգամայն:

Վաղեմի հայ բանաստեղծին այս կարևոր հեղինակութեան տպագրութիւնը գիւրջանելու համար, այժմէն բացուած է բաժանորդագրութիւնը և քանի մը օր վերջ Արշալոյսի ԺՈՂՈՎԻԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆին մէջ նոր տառերով և ամենաընտիր թղթի վրայ տպագրութիւնը պիտի սկսի և ֆորմա առ ֆորմա պիտի զրկուի բաժանորդաց:

Իրաւունք ունինք յուսալու թէ՛ ազգային զգացումը իրենց սրտին մէջ վառ պահել ուղղը ամեն ազգայինը՝ որ միանգամայն նախանձախնդիր կ'ըլլան բնակարանար հայ գրականութեան ծաւալմանը, պիտի փութան բաժանորդագրուել և քաջալերել բանաստեղծ հեղինակը, որ իր երկու հարիւր (200) էջերէ բաղկացեալ երկասիրութեամբը կ'ուզայ յաւելուլ կարևոր հեղինակութեանց թիւը:

Բաժանորդագրուելու համար պէտք է գիտնել ԺՈՂՈՎԻԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆը, ուր հեղինակը կը գտնուի ամեն օր կէս օրէ վերջ ժամը 5էն մինչև 7:

Իրտրանչիւր գրքի գինն է կանխիկ բաժանորդագրուելու համար ութը (8) դր. սղ. յետ տպագրութեան տասը (10) դր. սղ.—2 1)2 ֆրանք:

Արտասահմանի համար 2 1)2 ֆրանգ. փոսթի ծախքը հեղինակին կը պատկանի:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԻՍԲԵՐԱՅԻ ՄԸ ՁԵՐԱԿԱՆՈՒՄԸ.

Փոր — Սայիտի մէջ ձերբակալուեցաւ, Եգիպտոսի գլխաւոր քաղաքներուն և Փոր — Սայիտի մէջ իր բազմաթիւ խաբեարարութիւններով նշանաւոր Շարլ Հէլթիլը:

Երկու աֆրա առաջ ճարտարաբանատեղեան այս սուպետը Փոր — Սայիտ եկած է Երուսաղէմ ուխտի երթալու համար և հոն այցաբարտեր տպագրել տուած. ոմանք գետաբանատան պատուաւոր քարտուղարի մը անունով և ոմանք Բոր — Սայիտի Առաջնապահական վարչութեան Տր. Առաջնապահի անունով:

Աւստագնացութեան վերագարծին իւր ուղեգրի տրոգոսովը յաջողած է ժրանսական օտար լէգէտի գունդէն գասալիք Գերմանացի երիտասարդէ մը բաւական գումար մը փոխ առնել. Առաջնապահական վարչութեան մէջ քարտուղարի պաշտօն մը խոստանալով:

Բոր — Սայիտ վերագառնալու համար կակութիւնը ունեցած է, ուր՝ Գահիրէէն զըրչուած հեռագրի մը վրայ ձերբակալուած է, հաւանականաբար ուրիշ գողութեան իր համար:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 29 Յունիս. — Մովակալ Սէյմուրի հրամանին տակ գանուած Անգլիական շոկատը 25 մեռած 50 վիրաւորեալ ունեցաւ, որոնց մէջ 8 սպայ: Միւս ազգերուն զինուորներն ալ մէջ առնելով կորուստներուն աճող թիւը կը հասնի 62 մեռեալ և 212 վիրաւորեալի:

Ո՛չ օտար գետապանները, ո՛չ գետապանաց պաշտօնեաները ծովակալ Սէյմուրի չեռ կը գտնուին:

Պ. Պրոտրիք կը կարծէ թէ՛ գեռ աւանք ֆէրին են:

Փրանսական հիւպատոս Պ. Փրանսուա, չէին ետ — նանէն մեկնեցաւ Թօնրին երթալու համար: Փոխարքան իւր ճամբորդութիւնը կը գիւրջանէ:

Բարիկ 29 Յունիս. — Չինաստան զըրչուելիք օտար ուժերուն թիւը 80,000 ճարգ որոշուած է:

Շանկ — Հայ 1 Յուլիս. — Շի — Փուի Լնգլիական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ օէքինի Գերմանական գետապանը Յունիս 18 ի սպանուած է չինական զինուորներէն:

26ին միւս գետապաններուն կացութիւնը յուսահատական էր: Կայսրուհին սնզօր գաննիք երկարատե պոչապանելու:

Շանկ — Հայ 1 Յուլիս. — Չինացիները Լանկ — Չէ գետին վրայ Գրանկ — նանի լերդերուն և Շանկ — Հայի մէջ սեղ թոր-

փիլներ կը զնեն և օտարականներու գէժ գիւնագրելու կը պատրաստուին:

Սթէնտրթըն 1 Յուլիս. — Զօրավար Գլէյթի դէպի յառաջխաղացումը կը նշանակէ թէ՛ Տր Աէթ զօրավարը պաշարելու նոր ջանք մը կ'ընէ:

Լոնտրա 3 Յունիս. — Թիէն — Չինի Հիւպատոսները համաձայն են սէրութիւններուն յանձնարարելու համար, որպէսզի սպառնան կայսերական ընտանիքին նախահայրերուն գերեզմանները կործանել, իբրև միակ միջոց եւրոպացիները ազատելու:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Թ ՈՒ Ր Ք Ի Ս

Հայկական շարքերու առեն Ամերիկեան հպատակներու կրած ֆրանսերուն համար, Ամերիկեան կառավարութիւնը տուգանք պահանջած էր որ մինչև ց'արդ նկատի առնուած չ'էր: Ամերիկեան գործակատարը Բ. Իրան նօթա մը ներկայացուց՝ պնդելով որ անմիջական պատասխան մը ստուի Ամերիկեան կառավարութեան պահանջմանց, թէպէտև նօթան խիստ ազդու խմբագրուած է, սակայն վերջնագրի ձև չ'ունի. այսուհանդերձ կը ցուցնէ թէ Ամերիկեան կառավարութիւնը մտադիր է ծայրայեղ միջոցներու գիտնել:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն
ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ՌՈՒՄԻ
Ի ԲՈՐԹ — ԱՐԹԻԻՐ

Անցեալ մայիս ամսուան երրորդ շաբթուն Բօրթ — Արթիւրի Ռուս գաղթականութիւնը՝ Փրանսական ՏԱՅՐԵՂԱՍՏՈ ի Բաւաղը յաճանաւորուն այս քաղաքը բրած այցելութիւնը օճեց. որոնց նաւաստիները Գուանթուալոս նահանգին պետ ծովակալ Ալէքսիէվի ամենաշեղմ հիւրասիրութիւնը ընդունեցին:

Ի պատիւ իրենց տրուած ճաշկերոյթին մէջ բաժակներ պարսպուեցան Ռուսիոյ Կայսեր, Փրանսական հանրապետութեան նախագահին. Ռուսական և Փրանսական նաւատորմներուն և բանակներուն համար:

Ասէ զատ Ռուսական նաւատորմի պետին տունը ճաշկերոյթ մը տրուեցաւ Փրանսացի հիւրերուն: Զըգ. գնդին մէջ ընդունելութիւն մը կազմակերպուեցաւ. զօրանցի գլխաւոր մէջ պաշահանգէս մը, դաշար հացկերոյթ մը Տիմիթրի Տօնսոյ զրահաւորին մէջ փայլուն պաշահանգէս մը, տրուեցաւ. երկաթուղիով շրջագայութիւն մը և ճաշկերոյթներ տրուեցան Ռուսական զրահաւորներուն մէջ:

Մովակալ Գուրբօշն ալ, քաղաքավարական այս ցոյցերուն պատասխանեց իւր նաւերուն մէջ տուած հացկերոյթներով:

Պ Օ Լ Ի Պ Ա Տ Գ Ա Մ Ա Ի ՈՐ Ն Ե Ր Ը
Պ. Պ. Ֆիշէր և Վէսէլա Նիւ — Եօրք վերագարձան:

Յայտարարեցին թէ՛ իրենց ուղևորութեան շատ գոհ մնացին, և թէ՛ ամեն տեղ թէ՛ Հանրապետականներու և թէ՛ Հանրապետականներու կողմէ իրենց պատգամաւորութիւնը հրճուանօք ընդունուեցան: Միթիւնները այնքան բազմաթիւ ունկնդիրներ կը ժողուէին որ յաճախ նոյն իսկ ամենարեղարձակ արահներու մէջ տեղ կը պակսէր: Հանրավարական պայմանագրութեան ներկայ գտնուելու հրաւիրուեցան, բայց մերժեցին. որովհետև Միացեալ — նահանգներու քաղաքական կռիւններուն մասնակցել չ'էին ուզեր, և երկու կուսակցութիւններն ալ հաւատարմապէս իրենց սիրելի են:

Յուլիս 6ին Հալո համազ Փրանսական Աքիթէն շրջանաւով Եւրոպա պիտի մեկնին:

Տիար Մ. Հայկունի Բարից ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային կենաց» գրքին սակաւաթիւ օրինակներն յանձնած է Արշալոյսի ժողովրդական ՏՊԱՐԱՆԸ: Գրեւ ժամաբոց կրնան հոն գիմել:

Գանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղջ կը լինի:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

— 0 —

ԱՄԵՐԻԿԱ, (Ուէսթ Հօօփ) Տ. Մ. Ա. — Ձեր զրկածներն կ'ընդունին:

Պէտք է կանխիկ զրկել, եթէ կարելի է տարեկան անընդ ընթացքով մը:

ՊՈՒԼԿԱՐԻԱ, (Սօֆիա) Տ. Յ. Մ. — Ձեր պատասխանը ուշացուցիք: Անհատներ կ'սպասեն:

ԲԱՐԻՉ, Տ. Տ. — Ձեր հասցէին զրկուած քարթ-փոստալը չէ՞ք ստացած արդեօք, որ պատասխանը այոջտի յայտարարուի:

ԿԻՊՐՈՍ, (Ֆրանկոֆոն) Տ. Մ. Մ. — Ձեր պատասխանին կ'սպասեն:

ԿԻՊՐՈՍ, (Լարնակա) Տ. Յ. Յ. — Նոյնպէս:

ՊՈՒԼԿԱՐԻԱ, (Ռուսներ) Տ. Ե. — Փետր. 14)26 թուակիր յատուկ նոտակաւ մը, Ձեր սարեկան բաժանորդագրի ստացականը զըրկուած է եւ գեռ չ'պատասխանեցիք մեզ: Կը խնդրենք որ չ'յայտարարեցիք այլեւս:

ՊՈՒԼԿԱՐԻԱ, (Ռուսներ) Տ. Ե. Թ. — Նոյնպէս:

» (») Տ. Կ. Ա. — Նոյնպէս:

ՌՈՒՄԻՆԻԱ, (Թուրք) Տ. Ե. Փ. — Նոյնպէս:

» (Կալայ) Տ. Ե. Ա. — »

» (») Տ. Ղ. Փ. — »

» (Պոթոլան) Տ. Ժ. Կ. — »

» (Ռուսներ) Տ. Ն. Մ. — »

» (Պալք) Տ. Ն. Փ. — »

ՕՐՏՈՒՐՄԱՆ (Սուտան) Տ. Փ. Թ. — »

Ա Ձ Դ

— Կեսարացի երկամարդ մը. Պ. Կարապետ Իննէճեան, ութ ու կէս ամիսներէ ի վեր անհետացած ըլլալով, ծնողքը յուսահատած իր մասին ո՛ր է է տեղեկութիւն մը չ'ստանալուն համար, թերթիս Տնօրինութեան դիմած են, խնդրելով որ ուր գտնուելու մասին տեղեկութիւն մը ստանալով իրենց հաղորդեն:

Կը խնդրենք ուրեմն մեր Պատ. ազգայիններէն որ եթէ կը ճանաչեն կամ գիտեն ուր գտնուելը վերադառնալ երկամարդին, բարեհաճին երկտողի մը իմացնել թերթիս Տնօրինութեան, անոր յուսահատ ծնողաց սիրտը հանդարտեցնելու համար:

ՀՅԷԿԱՆԻ ՎԻՍԱԿԱՀԱՆՈՒԹԻԻՆ

Table with 6 columns of numbers: 8157 2715 885 4762 6384 1267 1421 1178 2870 2216 3046 3870 3726 4045 5427 5526 6250 2717 9722 9321 9837 9574 893 435 6200 700 3227

Տպագրութիւն ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԱՆԱ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԷ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օտանկի ղեկարարին ղիսնայի փողոցին մեջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մարտը և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարտականներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշդապահութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ:

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տամեկիւ տարիներ շարունակ կարեւոր լուսնկարգաւորներու մէջ աշխատելով արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պայտայ մէջ Ապտուլահ եղբարց աման ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօն վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպիֆ իյէ Եարխա Գաւնէշ Օթէլ ԵՒԵԲԵՐՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանի երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրսը կուսկներ ի հարկին:

Ակրակախան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով որոնք երբէք չ'են աւուր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլեւարթ:

Իւղաներկ եւ ջրաներկ պատկերներ և ըն Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն գունի ուրքուշ, սեյէրքընան եւ ըն:

Իրեն գիմող յաճախորդներն հանել սուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԻՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԲԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն: կը բաժնէ ամենէն աւելի շահարաժիները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինքստա իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրահիրէ

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր փազար-Մուրի խանութին մէջ պատրաստել Ենմէնի առոն ին ամենաընտիր և անխարդախ տեսակէն իրեն գիմող յաճախորդներ օրան 16 զրշ ողջի հաշուով, զուտ քաշի պիտի կրնան գնել: Կըսոյ մէջ ալ ուղղաճանաչութիւն գտնելով:

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՊԻՉԵԱՆ

Ի Եարխա Գոր-Պեյ, քիւ 20

Իր ՁՐԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կ'ես օրէ սուալ ժամը (ը. ե.) 9 էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղ աղքատ հիւանդներու: 5-8

ԳՐԲԵ ՈՐԶՈՂ ՆՅԲՈՒՆ

Գահիրէի և չրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն անկէ գիրք, (Իստակաւ, Իպրոցակաւ, Գիտակաւ, Գրակաւ Արուեստակաւ, Բանասիրակաւ, Վիպակաւ եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԹ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԵԱՐՈՅԺ

Ապսին Եարա Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը գաղթեցնէ վայրկեանապէս ակուայի ցուերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն աւ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ ազգասներու ձրի գարմանում, ամեն օր կ'էտօրէ եւր ժամը 5-5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութեան անելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գտնէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յԱզգ. քսանդրիա: